**Արձանագրություն N 2**

<<ՀԱԷԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-22/15>> ծածկագրով կայանի կարիքների համար << <<ՀԱԷԿ>> **ՓԲԸ կարիքների համար Արմավիրի մարզի Արշալույս համայնքի տարածքում գտնվող <<Ակնալիճ>> պանսիոնատին հատկացված տարածքի-շինությունների չափագրման աշխատանքների**>> գնման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Մեծամոր 11 հունվարի 2016թ.

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ Գ. Վանունին,

Հանձնաժողովի անդամներ Վ. Մովսեսյանը, Հ. Ամիրաղյանը, Մ. Գաբոյանը,

Հանձնաժողովի քարտուղար Ա. Ղազարյանը,

Գնման հայտ ներկայցրած <<ԿԱՖԷ>> ՍՊԸ- ի տնօրեն Թ. Չոբանյանը

1. **<<ՀԱԷԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-22/15>> ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման մասին**

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց <<**ՀԱԷԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-22/15**>> ծածկագրով <<**Արմավիրի մարզի Արշալույս համայնքի տարածքում գտնվող <<Ակնալիճ>> պանսիոնատին հատկացված տարածքի-շինությունների չափագրման աշխատանքների**>> գնման ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 700 000 (յոթհարյուր հազար) ՀՀ դրամ: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտի գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը:

ա. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի հայտ է ներկայացրել .

1.1 <<Սահակյան Պրոեկտ>> ՍՊԸ, Արաբկիր 21 փող. 21 տուն, հեռ. 094-288-589, ընդհանուր արժեքով 540 000 (հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, կազմակերպությունը աշխատում է առանց ԱԱՀ:

1.2 <<ԿԱՖԷ>> ՍՊԸ, ք. Երևան, Ավան Առինջ 1 մ/2 3/7 2 բն 3 հեռ. 055-42-55-99 ընդհանուր արժեքով 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, կազմակերպությունը աշխատում է առանց ԱԱՀ:

1.3 Ա/Ձ Նորայր Դարբինյան, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Ջիվանու 5 բն 7 ընդհանուր արժեքով 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, կազմակերպությունը աշխատում է առանց ԱԱՀ:

2. Ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած ծրարը և փաթեթում գտնվող փաստաթղթերը (կցվում են), հանձնաժողովը եզրակացրեց, որ՝

2.1 <<Սահակյան Պրոեկտ>> ՍՊԸ -ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2.2 <<ԿԱՖԷ>> ՍՊԸ -ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2.3 Նորայր Դարբինյան Ա/Ձ-ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես գնման ընթացակարգի ծածկագիրը <<ՀԱԷԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-20/15>> փոխարեն գրված է <<ՀԱԷԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-17/15>>:

Քանի որ, հայտում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, հանձնաժողովը որոշեց մերժել Նորայր Դարբինյան Ա/Ձ-ի ներկայացրած հայտը:

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. Ներկայացվեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը, առանց ԱԱՀ-ի՝

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | <<Սահակյան Պրոեկտ>> ՍՊԸ | <<ԿԱՖԷ>> ՍՊԸ |
|---|---|---|---|
| 1 | **<<ՀԱԷԿ>> ՓԲԸ կարիքների համար Արմավիրի մարզի Արշալույս համայնքի տարածքում գտնվող <<Ակնալիճ>> պանսիոնատին հատկացված տարածքի-շինությունների չափագրման աշխատանքներ>>** | 540 000 (հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ | 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ |

<<ԿԱՖԷ>> ՍՊԸ-ի տնօրենը չափագրվող տարածքների մակերեսներին ծանոթանալուց հետո սեփական նախաձեռնությամբ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գնային առաջարկը նվազեցրեց և որպես վերջնական գին առաջարկեց 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց թիվ 1 չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԿԱՖԷ>> ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4. Հանձնարարվեց հանձնաժողովի քարտուղարին էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ և Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:
Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով բացման նիստը շարունակել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընդունվեց որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ _______________ Գ. Վանունի

անդամներ _______________ Վ. Մովսեսյան

_______________ Հ. Ամիրաղյան

_______________ Մ. Գաբրյան

Քարտուղար՝ _______________ Ա. Ղազարյան